ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ **ք.Եղեգնաձոր**

N 26 **18 մարտի 2015թ.**

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.13-րդ կետի <<զ>>, 1.15-րդ կետի <<ժ>> , 1.17-րդ կետի <<բ>> և 1.20-րդ կետի <<դ>> ենթակետերի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Սույն թվականի մարտի 20-ից ապրիլի 20-ը մարզի բոլոր համայնքներում կազմակերպել բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ:

2.Առաջարկել մարզի բոլոր համայնքների և ձեռնարկությունների ղեկավարներին ՝

ա) մշակել և ներկայացնել սանիտարամաքրման, ծառատնկման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման ծրագիր-ժամանակացույց,

բ) միամսյակի ընթացքում ավարտել սանիտարամաքրման, ծառատնկման և կանաչապատման աշխատանքները :

3. ՀՀ առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն Մ.Մարգարյանին՝

ա) ամենօրյա հսկողություն սահմանել միամսյակի ընթացքում կազմակերպվող սանիտարամաքրման, աղբահանման, աղբաթափման և խմելու ջրի ախտահանման գործընթացի նկատմամբ :

4.Մարզի բնակավայրերում սանիտարամաքրման, ծառատնկման, աղբահանման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման ու կատարման նկատմամբ անհրաժեշտ հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով ՝ համաձայն սույն որոշման հավելվածի :

5. Սանիտարամաքրման, ծառատնկման, աղբահանման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման մարզային հանձնաժողովին՝

ա) հսկողություն իրականացնել միամսյակի ընթացքում կազմակերպվող աշխատանքների նկատմամբ,

բ) իրականացվող աշխատանքների ընթացքի մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետին :

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015 թվականի մարտի 18-ի
թիվ 26 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերում 2015 թվականին սանիտարամաքրման, ծառատնկման, աղբահանման և կանաչապատման միամսյակի աշխատանքների կազմակերպման ու կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարզային հանձնաժողով

1.**Ն.Սիմոնյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ – հանձնաժողովի նախագահ,

2.**Մ.Ներսիսյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ – հանձնաժողովի անդամ ,

3.**Ա.Հովսեփյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ - հանձնաժողովի անդամ ,

4.**Բ.Մարգարյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ – հանձնաժողովի անդամ ,

5. **Մ.Մարգարյան**՝ ՀՀ առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մասնաժյուղի տնօրեն - հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

6. **Վ.Գրիգորյան**՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ - հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**